

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	«ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԻՋՈՑ»
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝	ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝	Հասմիկ Բեյբուրջյան
ՈՒՍՈՒՑԻՉ՝	ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎԱՆՅԱՆ
ԴՊՐՈՑ՝	ԼԻՃՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2022թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....	4
Ի՞նչ է ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	4
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	5
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՐԸ.....	6
Ո՞ՒՄ ԵՆՔ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	9
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԻՋՈՑ .....	11
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ .....	12
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1.....	12
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2.....	13
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	14
<i>ՀԱՎԵԼՎԱԾ 1.....</i>	<i>14</i>
<i>ՀԱՎԵԼՎԱԾ 2.....</i>	<i>16</i>
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	17

## Ներածություն

Կրթության բովանդակության մեջ ուսուցման սկզբունքները, մեթոդները և գնահատումը փոխադարձաբար կապված են միմյանց հետ: Գնահատման նպատակը ուսուցման գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտումն է, որն էլ ապահովում է առարկայական չափորոշիչների ու ծրագրերի կատարումը և նպաստում սովորողների ինքնագարգացման և ինքնագնահատման, ապագայի նկատմամբ հավատի ձևավորմանը:

Գնահատման ճիշտ ռազմավարության ընտրությունը թույլ կտա երեխայի կրթության աստիճանական զարգացում, իրան կհանդիսանա հետագա կյանքում:

Եթե ուսուցման նպատակը երեխային օգնելն է, որ սովորի, հասնի գիտելիքների բարձունքներին, կարողանա այդ գիտելիքները կիրառել կյանքում, ապա գնահատումը այն չափն է, որը ցույց է տալիս երեխայի ձեռքբերումների մակարդակը և ուսուցչի աշխատանքի արդյունավետության մակարդակը:

Գնահատում կատարելիս գնահատողը պետք է զգույշ լինի, արդար, հուսալի, անկողմնակալ, հիմնավորված, թափանցիկ կատախր: Գնահատման ժամանակակից մոտեցումները թույլ են տալիս գնահատման գործընթացին մասնակից դարձնել աշակերտին /ինքնագնահատում/, համադասարանցիներին /կոլեկտիվ գնահատում/, բայց պետք է անպայման դա լինի ուսուցչի վերահսկողությամբ:

# Գրական ակնարկ

## Ի՞նչ է գնահատումը

Գնահատումը լայն հասկացություն է, այն նկարագրում է ցանկացած գործունեություն, որն իրականացվում է սովորողների գիտելիքների և կարողությունների մասին տեղեկություններ ստանալու նպատակով:

Գիտելիքների գնահատումը, ըստ էության սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման մակարդակի չափման գործընթացն է: Չափել նշանակում է այն համեմատել այն նախօրոք ընդունված միավորի հետ: Գիտելիքների դեպքում այն համեմատում ենք հանրակրթական պետական չափորոշիչի հետ: Պետական կրթական չափորոշիչում ամրագրված է սովորողների պատրաստվածության այն պարտադիր մակարդակը, որին պետք է հասնեն բոլոր սովորողները, և որը բավարար է դպրոցն ավարտելիս կրթության մասին վկայական ստանալու համար:

Գնահատման արդյունքում ստուգվում է սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների, այդ գիտելիքները կիրառելու ունակությունը: Գնահատմանն ուղղված ցանկացած աշխատանք պետք է կատարվի հատուկ նպատակով:

Գնահատում իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հարցեր:

1. Ու՞մ ենք գնահատում:
2. Ինչո՞ւ ենք գնահատում:
3. Ի՞նչն ենք գնահատում:
4. Ինչպե՞ս ենք գնահատում:

«Մենք գնահատում ենք ոչ թե մարդուն այլ նրա մտքերն ու ձեռքբերումները»  
ըստ Արսեն Վենգերի:

Գնահատումը կարևոր է, որովհետև այն վկայում է սովորողների ձեռքբերումների մասին, ինչպես նաև մանկավարժների ուսուցման գործընթացի արդյունավետության մասին: Գնահատման մասին ամրագրված են մի շարք փաստաթղթերում: Դրանցից են Հայաստանի Հանրապետության միջնակարգ կրթության պետական չափորոշիչը: Չափորոշիչը նկարագրում է, թե ի՞նչ գիտի և ի՞նչ կարող է անել աշակերտը ուսուցանողի մակարդակում (Հավելված 1): Հանրակրթության պետական չափորոշիչում նկարագրված են եռամակարդակ

պահանջները՝ «պարտադիր նվազագույն», «միջին» և «առավելագույն» մակարդակներ (Հավելված 6): Ըստ այդ էլ գնահատումն անհրաժեշտ է պարզելու համար, թե մեր աշակերտներն ըստ պետական չափորոշիչի առաջադիմության սանդղակի ո՞ր մակարդակում են գտնվում: Գնահատումը ուսուցիչները սովորողների ուսման որակը բարձրացնելու համար պետք է օգտագործեն (Հավելված 4): Աշակերտների առաջադիմությունը գնահատվում է 10-միավորանոց սանդղակով:

### **Գնահատման նպատակները**

Գնահատման նպատակը աշակերտների ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի բացահայտումն է: Նրա ձեռքբերումների և դժվարությունների, ուժեղ և թույլ կողմերի բացահայտումն, հաշվառումն, վերլուծությունը, արդյունքների օգտագործումը: Գնահատման հիմնական նպատակներն են

- Գնահատել և բարելավել ուսումնառությունը և դասավանդումը:
- Խոսել ձեռքբերումների մասին, բարձրաձայնել և ներկայացնել դրանք:
- Սովորողներին և շահագրգիռ մյուս կողմերին հետադարձ կապ տրամադրել նրանց առաջընթացի վերաբերյալ:
- Նպաստել սովորողների գիտելիքների, կարողունակությունների և հմտությունների ձեռքբերման և շարունակական զարգացմանը:
- Դիտարկել, բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, դասավանդման մեթոդական համակարգը:
- Խրախուսել և զարգացնել աշակերտի ձեռքբերումները, առաջ մղել դեպի նոր բարձրունքներ նվաճելու:

Դպրոցում գնահատման նպատակները դասակարգվում են հետևյալ հիմնական տեսակների.

- հայտորոշիչ գնահատում,
- ձևավորող գնահատում,
- ամփոփիչ գնահատում:

Հայտորոշիչ (ախտորոշիչ) գնահատումն նախնական գնահատումն է, որի նպատակն է պարզել սովորողների նախնական գիտելիքները, կարողությունները , հմտությունները՝ մինչև դասավանդումը:

Ձևավորող գնահատման նպատակն է ստուգել և կատարելագործել աշակերտի կողմից գիտելիքների յուրացման մակարդակը ժամանակի նեղ հատվածի ընթացքում, թեմայի ընթացքում: Ձևավորող գնահատման արդյունքներն օգտագործվում են աշակերտների կաողունակությունների թույլ կողմերի բացահայտելու, պարզաբանելու, թերացումները շտկելու նպատակով: Ձևավորող գնահատման նպատակն է բարելավել ուսումնական գործընթացը, ծրագրերի կատարողականի ստուգումը: Ձևավորող գնահատման նպատակն է պարզել աշակերտների գիտելիքների համապատասխանությունը առարկայական պետական չափորոշիչային պահանջներին:

Ամփոփիչ գնահատման նպատակն է գրանցել և հրապարակել աշակերտի առաջադիմությունը ժամանակի որոշակի հատվածում, ինչպես նաև որոշելու առաջադիմության առկա մակարդակը:

Ամփոփիչ գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային մատյաններում, փոխադրման թերթիկներում, վկայականներում, դիպլոմներում: Ամփոփիչ գնահատման արդյունքները օգտագործվում են ընտրելու կամ ընդունելու նպատակով օրինակ առարկայական օլիմպիադաներին մասնակցելու համար, բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար և այլն: Գնահատման այս երկու ձևն էլ կիրառվում են հաջորդաբար և մեկը մյուսին լրացնելով: Գնահատման այս երկու ձևի հետ պետք է հավասարազոր գործի նաև արտաքին գնահատումը: Արտաքին գնահատման արդյունքները պետք է համընկնեն ներքին գնահատման արդյունքների հետ:

### **Գնահատման ձևերը**

Գիտելիքների ընթացիկ գնահատումն ուսուցման արդյունքների բացահայտման և վերահսկման միջոց է: Գնահատման երկու ձևերի՝ ուսուցանող և ամփոփիչ միավորային գնահատումը իրականացվում է հետևյալ տեսակներով.

1. բանավոր հարցում, դասարանում կատարվող հիմնական հարցում, ձևավորող գնահատական,
2. գրավոր թեստեր ( ձևավորող կամ ամփոփիչ),
3. գրավոր ,պաշտոնական քննություններ (ամփոփիչ),

4. հմտությունների ստուգում (օրինակ քիմիայից, ֆիզիկայից կամ կենսաբանությունից լաբորատոր աշխատանքների և գործնական աշխատանքների կատարում),
5. դիտարկման ունակություններ դասարանում և տանը,
6. ինքնուրույն աշխատանքներ տանը և դպրոցում,
7. խմբային, համագործակցային աշխատանքներ, քննարկումներ, բանավեճեր, ռեֆերատներ, նախագծեր, հետազոտական աշխատանքներ և այլն: Այս աշխատանքների գնահատման ժամանակ կիրառվում են ինքնագնահատումը, փոխադարձ գնահատումը, միավորային գնահատումը:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր հերթին ներկայացվում է տարբեր բնույթի և տարբեր տեսակի առաջադրանքներով, որոնք բխում են նպատակներից: Ուսուցիչն է կրում տվյալ նպատակի համար գնահատման լավագույն տեսակի ընտրության պատասխանատվությունը:

Հիմնական և միջնակարգ դպրոցի շրջանավարտի ուսումնառության արդյունքները գնահատելու համար նախարարության կողմից սահմանված է պարտադիր ամփոփիչ գնահատման կարգ: Գնահատումն իրականացվում է տասը միավորանոց համակարգով:

2004 թվականից մինչև այսօր կիրառվում է այս համակարգը, ըստ որի դրական գնահատական է համարվում չորսից մինչև տաս միավորները:

Բացի «տասը» միավորային համակարգից կիրառվում են նաև այլ սանդղակներ , որոնք հետագայում համարժեքության կարգով փոխարինվում է «տասը» միավորանոց համակարգի: Համարժեքության կարգը որոշում է նախարարության կողմից: Առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր աշակերտի աճի բնութագիր, որի ձևը, լրացման և սովորողի ծնողներին տեղեկացման կարգը սահմանվում է նախարարության կողմից:

Այս տարվանից հետո գործելու է նոր չափորոշիչն, որն այս ուսումնական տարում փորձարկվում է Տավուշի մարզում և ամբողջ հանրապետությունում ուժի մեջ

կմտնի 2022-2023 ուսումնական տարում: Ըստ նոր չափորոշիչի քանակական (միավորային) գնահատման համար կիրառվում է տասը միավորային սանդղակ: Տասը միավորային սանդղակում որևէ թիվ չի հանդիսանում անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Քանակական գնահատումը ցույց է տալիս աշակերտի ուսումնական հաջողությունները, սկսվում 1 միավորից և չունի անբավարար սանդղակ:

Հանրակրթական ուսումնական հաստատությունները կարող են կիրառել գնահատման այլ համակարգ, որը համապատասխանեցվում է 10 միավորային սանդղակին:

Ձևավորող (ուսուցանող) գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում գնահատումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ) և հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին (ամփոփիչ ատեստավորում): Ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, չափորոշչային պահանջների կատարումը ստուգելու նպատակով, իր կողմից սահմանված պարբերականությամբ, դպրոցներում պետք է կազմակերպվի արտաքին գնահատում: 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ, որպես տարեկան ամփոփիչ գնահատական, կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

Միավորային գնահատումը կիրառվում է սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից:

Շատ գովելի ռազմավարություն է մշակվել մեր պետության կողմից: Տարրական դասարաններում պետք է ձևավորել ուսման նկատմամբ հետաքրքրասիրություն, ձգտում նորանոր գիտելիքների տիրապետման, դրանք



կիրառելու շահագրգռվածություն, աճի մակարդակներ ձևավորել: Աշակերտների մոտ ձևավորել ուսման նկատմամբ որպես ներքին, սեփական հոգածության և պատասխանատվության գործունեություն՝ ուղղված իր անձի զարգացման: Ուսուցիչները և ծնողները պետք է օգնեն աշակերտներին կշռադատել և կառուցողաբար վերլուծել իրենց ջանքերն ու ձեռքբերումները: Վերջապես գնահատականի համար չէ որ պետք է սովորեն:

Մեկից դրական գնահատական համարելը նույնպես շատ ճիշտ է: Թե չէ այս դեպքում մեկ ճիշտ պատասխանը, կամ երկու, կամ երեք ճիշտ պատասխանը չէր խրախուսվում, կամ մնում օդում որպես բանավոր խոսք: Կամ մի ամբողջ շաբաթ հավաքվում, դառնում էր դրական գնահատական նոր գրանցվում:

### **Ո՞ւմ ենք գնահատում**

Այս աշխարհում նավարկելու համար երեխային անհրաժեշտ է գնահատել իր գործողությունները: Ուսուցիչը պետք է ճիշտ և ժամանակին կիրառի խթանման մեթոդներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները: Գնահատման և խրախուսման հմուտ կիրառումը ուսուցչից պահանջում է մանկավարժական նրբանկատություն և որոշակի հմտություն: Ցանկացած գործողություն պետք է ուղեկցվի որոշակի մեթոդի կիրառման պատճառների և պայմանների վերլուծությամբ: Ուսուցիչն պետք է լավ ճանաչի իր աշակերտին, նախորդ տարիների անցած ճանապարհը, նրա երազանքներն ու նպատակները: Ուսուցիչը պետք է ծանոթ լինի աշակերտի թույլ և ուժեղ կողմերին: Հենվելով ուժեղ կողմերի վրա զարգացնի և վերացնի թույլ կողմերը:

Ուսուցիչը պետք է համագործակցի գործընկերների հետ, ծնողների հետ, մանկավարժական մյուս աշխատողների հետ: Անպայման պետք է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները: Յուրաքանչյուր երեխա մի մոլորակ է, իր չբացահայտված և բացահայտված կողմերով: Ուսուցիչը պետք է համագործակցի ծնողների հետ:

Ծնողները հաճախ «մշակում» են սովորելու հետաքրքրություն՝ երեխային խաղալիք տալով կամ որոշակի գումար վճարելով: Մի կողմից՝ ուսումը աշխատանք է, որը, ինչպես բոլորին է հայտնի, պետք է պարգևատրել: Թվում է, թե ամեն ինչ ճիշտ է, քանի որ հասարակությունն այսպես է աշխատում, իսկ ծնողները «կյանք են

սովորեցնում»: Իսկ մեծահասակների համար այս մոտեցումը հարմար է՝ նա նայեց օրագիրը՝ երեխային վճարեց իր ազնվորեն վաստակած դրամը կամ (ով ինչ հնարավորություններ ունի): Դաստիարակելու համար ծնողները պարտք կատարելու զգացումով, անցնում են իրենց հոգսերին: Բայց, մյուս կողմից, ինչպե՞ս բացատրել երեխային, որ բոլոր մարդիկ ունեն պարտականություններ, որոնց համար ոչ ոք չի վճարի: Օրինակ՝ դժվար թե ծնողներից որևէ մեկը ակնկալի, որ իրեն վճարեն այն ամենի համար, ինչ սովորեցնում է իր երեխային: Նմանապես, երեխան չպետք է մտածի իր սովորածի համար վճարելու մասին:

Լավ արժեք՝ փող կամ դրանց «նյութական համարժեքը» խրախուսման մեթոդը այս շղթայից բացառում է ամենակարևոր օղակը՝ հետաքրքրությունը երեխայի անձի, նրա զարգացման, գիտելիքների խորության ու որակի նկատմամբ: Փաստորեն, պարզվում է, որ նյութական խթանները երեխային սովորեցնում են այն մտքին, որ փողն ավելի կարևոր է, քան գիտելիքը, որ որպես կրթված մարդ հետաքրքրություն չի առաջացնում սեփական ծնողների մոտ: Դպրոցում նյութականի բացակայությունը կրերի դատարկություն: Պետք է բացահայտել նման դեպքերն և բացառել դրանք:

Մանկավարժը ուշադիր և հետևողական պետք է լինի բոլոր կողմերից: Տարբեր տարիքի երեխաների մոտ հուզական և կամային որակները տարբեր են:

Տարիներ առաջ այս դեպքը հանդիպել է իմ պրակտիկայում : Երկու աշակերտ միասնական քննությունից ստացել էին միջին գնահատական և մոտենում են դպրոցի տնօրինությունից ստանալու զթվից ուղարկված վկայագիրը: Փոխտնօրենը Ա աշակերտին տալիս է վկայագիրը և ասում էթե «Ի՞նչու ես այսքան ցածր ստացել, մենք քեզանից ավելի բարձր արդյունք էինք սպասում»: Ա-ն պատասխանեց , թե «Հաստատ իմ արդյունքները ձեզ չեն հոսալքի, կապրենք կտեսնենք»:

Մոտեցավ Բ աշակերտը, որի արդյունքն համարյա նույնն էր: Փոխտնօրենը նույն կերպ արտահայտվեց: «Ի՞նչու ես այսքան ցածր ստացել, մենք քեզանից ավելի բարձր արդյունք էինք սպասում»: Բ-ն պատասխանեց, թե «Ստացվեց, ես էլ չհասկացա ինչպես եղավ»:

Երկուսն էլ դիմել էին Երևանի Պետական համալսարանի տարբեր բաժիններ: Նրանք երկուսն էլ ընդունվում էին վճարովի ուսուցմամբ: Ա-ն ընդունվեց, գերազանց սովորելու պատճառով տեղափոխվեց պետական անվճար հիմունքներով: Սովորեց

գերազանց, ավարտեց «Կարմիր» դիպլոմով: Աշխատանքի անցավ Կենտրոնական բանկում:

Երբ օրերից մի օր վերադարձավ դպրոց փոխսնօրենին ասաց, թե «Իմ արդյունքները այնքան էլ ցածր չէր, ես դեռ էլի կձգտեմ բարձրունքների»:

Բ-ն դեն շարտեց իր արդյունքը, չգնաց սովորելու, պատճառաբանելով, որ մեկ է հինգ տարի վճարովի սովորելուց հետո պետք է բռնի արտագնա աշխատանքի ուղին, ավելի լավ է այսօրվանից սկսի: Հիմա էլ նա տարերայնորեն մեկնում է արտագնա աշխատանքի հազիվ հոգալով իր ընտանիքի հոգսերը:

Ուսուցիչը պետք է շատ զգույշ լինի իր տված գնահատականի մեջ, ճիշտ բառեր ընտրի, քաջալերի ոչ թե կանխի: Ճակատագրական այդ պահին ասված խոսքերը մնացին այդ երկու աշակերտների հիշողություններում:

### **Գնահատումը որպես խրախուսման միջոց**

Յուրաքանչյուր գործողություն ունի որոշակի նպատակ: Մանկավարժության մեջ գնահատումը որպես պարզևատրումը բարոյական ազդեցության օգնությամբ բարի գործերի խթանման մեթոդ է: Լավ գնահատականն արդեն խրախուսանք է, որը ցույց է տալիս, որ երեխան ավելի լավ դաս է քաղել, քան իր ընկերը, քան իր նախորդ աշխատանքը, որ նրա վերաբերմունքը սովորելու նկատմամբ հարգանքի է արժանի: Բացի այդ, ուսուցիչը կարող է գովել աշակերտին դասարանում, միևնույն ժամանակ դասընկերների շրջանում ճանաչում առաջացնելով՝ «դուրս մղելով ընդհանուր շարքերից» (ըստ Ա.Ս. Մակարենկոյի) և խրախուսելով նրանց հավասարեցնել լավագույնի օրինակին:

Պարզևներ կիրառելիս գլխավորը ծայրահեղություններից խուսափելն է: Խոհեմությունը և երեխայի անհատական որակների ըմբռնումը կօգնի նավարկելու կարգապահական միջոցների կիրառումը: Ոչ մի դեպքում չի կարելի կիրառել պատիժ, նախատինք կամ նման մի բան: Եթե երեխային միայն պատիժ է սպասվում, ապա նա չի սովորի ճիշտ վարքագիծը: Բացի այդ, նա կվախենա պատժողից, կձգտի խաբել նրան՝ պատժից խուսափելու համար: Օրինակ՝ ոչ մի նախատինք ու պատիժ չի դարձնի դպրոցը երեխայի համար ավելի գրավիչ, բայց եթե գովաբանեք և խրախուսեք նրան ամեն մի փոքր հաջողության համար, հույս կհայտնվի, որ նա հաճույքով կսովորի: Մեր կրթական կարգում արդեն իսկ առկա է գնահատում որպես

խրախուսման միջոց: Գնահատում իրականացվում է տասը միավորանոց համակարգով: Եթե թեմատիկ գրավոր աշխատանքը աշակերտը կատարել է օրինակի համար 5,5 (հինգ ամբողջ հինգ) միավորի, նրա գնահատականը կլորացվում է և գրանցվում 6 (վեց): Ավելանում է կես միավոր: Նույն ձևով նաև կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքը: Նորից ավելացավ կես միավոր: Կիսամյակային գնահատականը հաշվելիս գործում է հետևյալ սկզբունքը, այն հաշվարկվում է ամբողջ կիսամյակի ընթացքում բանավոր հարցման, գործնական աշխատանքների, թեմատիկ գրավոր աշխատանքների միջին թվաբանականով: Եթե ստացվեց 6,5 (վեց ամբողջ հինգ), ապա կլորացվում է և գնահատվում 7 (յոթ): Ավելանում է կես միավոր: Տարեկան գնահատականը հաշվարկելիս գործում է նույն սկզբունքը: Երկու կիսամյակային գնահատականների միջին թվաբանականը եթե ստացվեց 7,5 (յոթ ամբողջ հինգ), ապա գնահատվում է 8 (ութ): Ավելանում է կես միավոր: Արդյունքում ունենում ենք բարձր գնահատված լավ սովորող աշակերտներ, ուսման բարձր առաջադիմությամբ:

## **Փորձարարական հետազոտություն**

### **Փորձարարական դաս 1**

Այդ սկզբունքի հետքերով կատարել եմ գնահատում որպես խրախուսման միջոց դիտարկումներ իմ դասավանդած դասարաններից մեկում: Թույլ ընդունակությունների տեր երեխային հետևողականորեն ավելի բարձր գնահատելով հասել եմ առաջընթացի:

Դիտարկում կատարել եմ յոթերորդ դասարանում իմ դասավանդած քիմիայի ժամերին: Քիմիան սկսել են ուսումնասիրել յոթերորդ դասարանից: Մեր դպրոցի յոթերորդ դասարանում սովորում են յոթ աշակերտներ, որոնցից երկուսը աղջիկ, հինգը տղա: Առաջին դասը պլանավորել եմ այնպես, որ ավելի շատ բան կարողանան խոսել, պատմել աշակերտները:

Աշակերտները մեծ ոգևորությամբ պատմեցին իրենց երազանքների մասին, իրենց ապագա նախընտրելիք մասնագիտությունների մասին: Այս հարցը ավելի մատչելի էր նրանց համար և օգևորությամբ պատասխանում էին: Նրանցից

ընտրեցինք այն մասնագիտությունները, որոնք քիչ թե շատ կապ ունենին քիմիայի հետ(բուժքույր, բժիշկ, գյուղատնտես): Աշակերտները թվարկեցին ցուցադրված նյութերի և մարմինների անունները, դասարանում գտնվող առարկաները, տանը օգտագործվող նյութերն առարկաները, դրանցից որոնք են պատրաստված քիմիական գործարաններում, մեր հագուստներից որոնք են արտադրվել քիմիական գործարաններում: Սննդամթերքներից որոնք են քիմիական մշակման ենթարկվել մինչև մեր ուտելը: Ժամանակակից շատ սարքավորումներ (հեռախոս, համակարգիչ, ավտոմեքենա) ինչպես են պատրաստվում: Մեր գեղեցիկ տների մեջ ինչքան շատ են քիմիական նյութերը ( գաջ, ցեմենտ, բետոն, գիպսից դեկորներ, ապակի, ելրոպատուհաններ և այլն): Ակտիվության համար գնահատել եմ 6 (վեց) գնահատականով: Իրականում պետք է գնահատել հինգ:

## **Փորձարարական դաս 2**

Հաջորդ դասին ներկայացան տնային աշխատանքները կատարված, դասը պատմեցին ինչպես սովորել էին դասարանում, դասագրքի նյութը կարողացան ամբողջությամբ պատմել:

Նոր նյութի հաղորդման ժամանակ մտազրոհին ակտիվ էին: Այն հարցին, թե ի՞նչու պետք է քիմիան լավ սովորենք, պատասխանեցին մեծ ոգևորությամբ: Ցուցադրեցի տեսասահիկ«Մարմին և նյութ» վերնագրով:

### [Մարմին և նյութ - Google Презентации](#)

Մտազրոհի կազմակերպեցինք մեր շրջապատի մարմիններով: Գրատախտակին գրի առնվեց բոլորի թվակաձևերը, նրանցից ընտրեցինք միևնույն նյութից պատրաստվածները: Բերեցին օրինակներ, երբ միևնույն մարմինը պատրաստված է տարբեր նյութերից:

Նորից ակտիվության համար գնահատել եմ վեց, խրախուսելով մեկ միավորով:

Մինչև իմ գնահատելը դիմեցի դասարանին փոխադարձ գնահատում կատարեն իրենց դասընկերներին: Հնչեցին «հինգ», «յոթ», «բայց ի՞նչ ասեցին ավելի» արտահայտությունները դասընկերների կողմից:

Երբ դիմեցի իրենց ինքնագնահատման համար անկեղծացան , որ նախորդ դասին իրենք ավելի ակտիվ էին :

Ես ցանկանում եմ ավելի շատ գնահատման գործընթացին մասնակցեն երեխաները փոխգնահատման և ինքնագնահատման ձևերով: Պետք է օգնել աշակերտներին կշռադատել և կառուցողաբար վերլուծել իրենց ջանքերն և ձեռքբերումները: Աշակերտները միմյանց գնահատելու ժամանակ պետք է հիմնավորեն իրենց դրած գնահատականը: Նախօրոք ներկայացնեն բացթողումները: Դրանով բարձրանում է աշակերտների մոտիվացիան (շահագրգռվածությունը) ուշադիր լսելու ընկերոջ պատասխանը, որպեսզի արդար գնահատեն միմյանց:

### Եզրակացություն

Իմ խրախուսման նպատակը բարձրացնել աշակերտների ինքնագիտակցությունը, պատասխանատվությունը, զարգացման մակարդակը:

Յուրաքանչյուր աշակերտ՝ մեր վաղվա Հայաստանի Հանրապետության քաղաքացին, գնահատի բնության հրաշքները և կատարելությունը, բնության բնական ստեղծագործությունները և հարգանքով վերաբերվելու բնությանը, չաղտոտի շրջակա միջավայրը քիմիական նյութերով, հարգի կենդանիների ազատ բնության մեջ ապրելու իրավունքները: Գիտակցելու սեփական պատասխանատվությունը հետագա սերունդների համար շրջակա միջավայրի պահպանելու և դրան խնամքով վերաբերվելու գործում:

### Հավելված 1

#### Դասապլան

Առարկա	Քիմիա	Ամսաթիվ	1. 09. 20 22	Գիսամյակ	I	Դասարան	VII
Թեմա՝	Ներածություն: Քիմիան որպես բնագիտության մաս, քիմիան մեր շրջապատում:						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, տարբեր նյութերի և մարմինների նկարներ, իրական նյութեր, դասասենյակում գտնվող առարկաներ:						
Դասի նպատակը՝	<p><b>Իմանա՝</b> քիմիա գիտության տեղը բնական գիտությունների մեջ:</p> <p>Հասկանա քիմիայի ուսումնասիրման նպատակները և խնդիրները:</p> <p><b>Կարողանա՝</b> տարբերել կենդանի և անկենդան բնության մարմինները:</p>						
Ուսուցանման արդյունքները, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	Երեխաները <b>կարողանան</b> թվարկել բնական գիտությունների բնագավառները:						
	<b>Գիտակցի</b> քիմիա գիտության կարևորությունը:						

**Արժևորի քիմիայի նշանակությունը կյանքում և կենցաղում:**

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
Հաշվառում- 1ր		Ներկա, բացակա:		
Բացահայտել սովորողների գիտելիքները նախորդ դասարաններից- 20ր	Պատասխանել հարցերին:	Ցույց տալ տարբեր նյութերի և առարկաների նկարներ, անկենդան բնության նկարներ, դասասենյակում գտնվող առարկաներ:	Ուղղորդված հարցեր՝ Ի՞նչ էք երագում դառնալ: Ինչու՞ է սա անկենդան, Ինչու՞ է սա մարմին: Ինչու՞ է սա նյութ:	Զրույցի մեթոդ:
Նոր գիտելիքների հաղորդում-20ր	Պատմում են իրենց երագանքների մասին:  Քննարկում են իրենց մտքերը:  Մտածում են հաղորդած նյութի կարևորության մասին:  Տեսրերում գրում են <<Քիմիա>> գիտության սահմանումը:	Բացատրել քիմիա գիտության դերի մասին: Խթանել քիմիա առարկան լավ սովորել: Շրջապատում և կենցաղում հանդիպվող նյութերը ճանաչել:	Ի՞նչ մարմիններ կան մեր շրջապատում: Ի՞նչ նյութերից են նրանք պատրաստված: Ի՞նչ ծանոթ նյութեր գիտեք, որոնք արտադրվում են քիմիական գործարաններում:	Դասախոսության մեթոդ:  Հարց ու պատասխանի մեթոդ:
	Լսում են, ուշադրությունը կենտրոնացնում:  Թվարկում են իրենց ծանոթ մարմինները, նյութերը:  Հարցադրում են իրենց չհասկացած հարցերը:	Բացատրել շրջապատի առարկաների <<տուն, ավտոմեքենա, հեռախոս, համակարգիչ և այլն>> առաջացումը պարտական ենք քիմիային:	Ի՞նչ էք կարծում հիմա մենք որտեղ կապրեինք եթե չլինեք ցեմենտը: Ի՞նչ էք կարծում , առանց ավտոմեքենայի մենք ո՞նց կապրեինք:	Դասախոսության մեթոդ:  Բանավեճի մեթոդ:
Անդրադարձ-3ր	Պատասխանում են հարցերին:	Զիսակացված հարցերի մեկնաբանություն:	Ի՞նչ սովորեցինք այսօր, ինչու՞ պետք	Հարց ու պատասխանի

			է լավ սովորենք քիմիան:	մեթոդ:
Տնային հանձնարարություն -1ր	Սովորել դաս 1-ին, էջ 5-7: Գրել տեսքում վարժություն 1-3			

## Հավելված 2

### Դասապլան

Առարկա	ՔԻՄԻԱ	Ամսաթիվ	6. 09. 2022	Կիսամյակ	I	Դասարան	VII
Թեմա՝	Մարմին և նյութ						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, տարբեր առարկաների և նյութերի նկարներով տեսասահիկ, իրական նյութեր և առարկաներ դասարանից և տնից, շրջապատից:						
Դասի նպատակը՝	<b>Իմանա՝</b> շրջապատում գտնվող առարկաներին անվանում են մարմիններ: <b>Կարողանա՝</b> թվարկել այդ մարմինները ինչ նյութերից են պատրաստված:						
Ուսուցանման արդյունքները, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	Երեխաները կարողանան տարբերել մարմինն և նյութը: Կկարողանան ինքնուրույն բերել նյութերի և մարմինների օրինակներ:						

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ
Հաշվառում- 1ր		Ներկա, բացակա:		
Նախորդ դասի հարցում- 20ր	Պատմել դասը: Պատասխանել հարցերին:	Տնային առաջադրանքների ստուգում: Կատարել հարցում:	Ի՞նչ անհասկանալի հարցեր կան:	Պատմողական մեթոդ:
Նոր գիտելիքների հաղորդում-13ր	Դիտում են տեսասահիկը: Թվարկում են բոլոր այն մարմինների անունները, որոնք իրենց ծանոթ են: Քննարկում են, համագործակցում միմյանց հետ:	Գրատախտակին գրում են երեխաների առաջադրած մտքերը: Բացատրում մարմինների և նյութերի միջև եղած տարբերությունները: :	Ի՞նչ մարմիններ կան ձեր շրջապատում: Ի՞նչ նյութերից են նրանք պատրաստված: Այդ մարմինները ուրիշ ի՞նչ նյութերից կարելի է պատրաստել: Նույն նյութից ուրիշ ի՞նչ մարմիններ կարելի է պատրաստել:	Մտազրոհ: Դասախոսության մեթոդ:
Անդրադարձ-10ր	Պատասխանում են հարցերին:	Չհասկացված հարցերի մեկնաբանություն:	Ի՞նչ է ընկած մարմին և նյութ հասկացություններ ի տարբերության հիմքում: Ի՞նչ հասկացություններ սովորեցինք:	Հարց ու պատասխանի մեթոդ:



<p>Տնային հանձնարարություն -1ր</p>	<p>Սովորել դաս 2-րդ, էջ 8-12: Լուծել վարժություն 3,4:</p>
--	---

### Գրականություն

1. Քիմիա առարկայի ուսուցիչների 4-օրյա վերապատրաստումների ուսումնական նյութերի փաթեթ: Եր. :Անտարես, 2009 թ:
2. Иващенко Ф. Психология воспитания школьников. Учебное пособие для студентов высших педагогических учебных заведений. Изд.: Беларусь. Вышэйшая школа. 2006-189 с.
3. «Սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն», Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005թ, 105 էջ
4. Զոհրաբյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Արնատույան «Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն», ԱՅՐԵՔՍ, Երևան, 2002
5. Ա. Արնատույան, Ի. Օհանովա, Գ. Հովհաննիսյան «Սեմինար պարապմունքների ուղեցույց: Ձեռնարկ ուսումնական ծրագրեր մշակող մասնագետների համար»
6. «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ», ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար Ս. Վարդումյան, Երևան, «Նոյան Տապան», 2005թ
7. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան և ուրիշներ «Համագործակցային ուսուցում» ձեռնարկ, Երևան, «Անտարես» 2006թ:

